



Պատասխանատու
Յովհաննէս Փիլիսեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

Համակրն ուղղելի և
առ. Ղ. Գ. Պաղազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՄԵԼՏՐԱԿԱՆ

ԲԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻՈՅ ՇԱՐԱԹ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1878 ԹԻԻ 1107

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թուրքա-ուստական պատերազմը նոր չարիք մի ևս տուաւ աշխարհիս, այն է արքայապա- նութիւնը, որ տարափոխիկ ախտ մի գարձած է արքունեաց մէջ։ Սոյն ախտիս ենթակայ եղան հետզհետէ Բուսիոյ կայսրը, Սպանիոյ և Իտալիոյ թագաւորները, որոնք նախախնամական դորու- թեամբ ազատեցան մահուանէ։ Անցեալները դաւաճանութիւնը իւր ձեռքը Աւստրիոյ կայսեր ևս երկնցուց մահաց որո՞ւ ուսմբ մի ճաթեցընե- լով Հունգարիոյ խորհրդարանի նախագահ Պ. թիցայի պալատան դրան առջև յորում Յրան- չիկոս Յովսէփ կայսրը հայկերութի հրաւիրուած էր։ Ամերիկայի մէջ ևս փոխադրուած է արքա- յասպանութեան ախտը, որոյ զօհ եղած է Բե- րուի հասարակապետութեան նախագահը և Պ. Պոլսոյ լրագրաց եթէ հաստատու լինիմք, նոյն ախտը յանդգնած է մինչև կայսերական քաղաքը մտնել և Ն. Վեհափառութեան կենաց սպառ- նալ։ Բարեբաղդարար հաւատարիմ պաշտօնէից աշխուշ հսկողութեամբ առաջը կ'առնուի և պատճառ կուտայ միայն պաշտօնէութեան փո- փոխութեանը, որոյմէ գլխաւոր մաս մի կատկած տուած է դաւաճողութեան։ Մեք սոյն գործոյն մէջ նախախնամութեան մասը կընշմարեմք, որ պալատական յեղափոխութեանց մէջէն առաջ- նորդելով Մեծ Եպարգոսութեան գահը կըբաղ- մեցնէ դարձրապատիւ խէրէտտին փաշան, ո- րոյ ձեռաց մէջ կըլարծեմք լինել արգարութե կիւռը, զոր ոչ ոք մինչև ցարդ իւր նախորդե- րէն համարձակած են թերևս կրել կրօնական արգելքներ նշմարելով իրենց դիմաց։ Սոյն քաղցր յոյսերը մեր սրտին մէջ կըծնցընէ նորին Բարձրութեան առ մեր ամեն։ Ս. Պատրիարքն յայտնած գաղափարները, զոր քիչ մի յետոյ պիտի կարգացուի։

Օսմանեան կառավարութիւնն իւր ներքին բարեկարգութեանց փոյթ տանելոյ համար ար- տալուստ ապահովութեան պէտք ունի։ Վասն որոյ կ'ըսուի թէ՛ Մեծ Եպարգոսը ծանուցադիր մի պատրաստած է մեծ տէրութեանց մատու- ջանելոյ, որոյ մէջ կըլինէ պատերազմաց երե- սէն եկամտից աղբիւրներուն պակսիւր, և հե- տեապէս կըցանկայ որ բանակները խաղաղու- թեան վիճակի վերածուին։ Բայց ասոր համար ևս հարկ է որ արտաքին ապահովութիւն ունե- նայ։ որպէսզի տէրութեան ձեռնարկելիք բարե- նորոգմանց ծրագիրները կանոնաւոր ընթացից մէջ լինին։ Սոյն հետեւութիւնը ձեռք բերելոյ համար օտար տէրութեանց բարեսէր ձեռնտու- ւթիւնը թախանձարար կըլնդրէ։ Կըյուսամք որ Մեծ Եպարգոսի ջանասիրութեամբ արտա- քին գործոց պաշտօնէութեան խորհրդականաց ընելիք սոյն օրինակ բարենպատակ ձեռնարկը արդէն ի գործ դրուած ըլլայ։

Բուլղարական մեծ խնդիրը գեւաւնելոյ կը- մնայ, Արեւելեան Բուսիոյ գարշուծիւնը կար- գաւորելոյ համար տէրութեան կողմէ զրկուած համազգային յանձնաժողովը ձեռնուենայն ետ գարձաւ մեծ արդելք տեսնելով Ռուսաց կողմէ։ Յիշեալ կառավարութիւնը բանակցութեան մը- տած է այժմ Անգլիոյ հետ, որպէսզի համա- ձայնի Բուսիոյն բուն Բուլղարիոյ հետ միացը- նելու խնդրոյն։ Մեզ կ'երեւի թէ վերջապէս Ռուսը իւր նպատակը ի գործ պիտի դնէ ԲՅ կամայ և թէ ակամայ։ Սոյն եղբակցութիւնը դուշակել զուսայ մեզ նա իւր զօրաբանական թիւը երբէք պակսեցընել չուզել։ Սոյն է նաեւ Բերլինի ֆօթո լրագրին կարծիքը և եթէ եր-

կուց գաւառաց միաւորութիւնը այժմ չիրա- գործուիր, պատճառն այն է որ Աւստրիա ևս գէմ է անոր։ Իսկ Բ. Դրան աղգեցութիւնը Արեւելեան Բուսիոյ վերայ չներգործելով, պի- տի լինի նա պարզապէս Բուլղարիոյ մէկ մասը, որ աւուր գէտ ի նորա ձգուելով, մինչև որ եր- թայ բոլորովին միանայ։

Եթէ Անգլիոյ կողմի քաղաքականութիւնը, կ'ըսէ յիշեալ լրագիրը, որ Աւստրիոյ բնական քաղաքականութիւնն է, ապա լինել ի գոր- ծադրութիւն, պիտի պահանջէր նա որ մեծ Բուլ- ղարիա մի սահմանագրապէս կապուէր և ինքն նորա խնամակալը լինէր։ Բուլղարի ալ ժամա- նակ կորուստ մի գտածի պէս չորս ձեռք պիտի փակէին այնպիսի պաշտպան տէրութեան, որոյ մտքէն ոչ պիտի անցնէր և ոչ կարողութիւն ու- նենար Բուլղար աղգայնութիւնը կլլելոյ։

Ռուսիոյ կառավարութեանը հիմնական փոփո- խութեան վերայ հեռագիրը կարեւոր լուրեր կըբերեն մեզ։ Ռուսիոյ վեհ. կայսրը ի Ս. Բեդե- րսբուրգ հասնելուն անմիջապէս սոյն լուրը տա- րածուեցաւ։ Եթէ ստոյգ է, բացարձակ ինքնա- կալութեան վերին ժամը զարկած է Ռուսիոյ մէջ և նորա յաջորդած է Սահմանադրական կառավարութիւն, որ պիտի ունենայ իրեն պա- տասխանատու պաշտօնէութիւն մի, ինչպէս կ'ը- սէ հեռագիրը։ Սոյն դէպքը ոչմիայն Ռուսիոյ, այլև բոլոր եւրոպական տէրութեանց համար իւր ծանրաշուքութիւնը ունի։ Ուստի կըմնայ մեզ մաղթել որ յաջողութեամբ իրագործուի ու յառաջանայ յոգևոտ բարոյական, մտաւորա- կան և բնիկական յառաջող իմութեան բովան- դակ աղգայնութեանց Ռուսաստանի։

Անգլիոյ ինչպէս իւր խորհրդարանաց, նոյն- պէս և Աֆղանիստանի մէջ յառաջ կ'երթայ իւր յուսացածէն աւելի յաղթանակներ ձեռք բե- լելով։ ամեն տեղ ուր որ աշխուշ, անշունք ընդ- գիմութիւններ միայն գտաւ, էմիրը բոլոր իւր զօրութեամբը ամենեւին փորձ չիրձեց գիմա- գրել, և ոչ Ռուսիոյ վերայ իւր ունեցած յոյսը պոսկուած տեսաւ։ Վասնորոյ իւր կացութեան վերայ զանազան լուրեր կըհասնին մեզ անգլիա- կան հեռագրաց միջոցաւ։ մէկ մի հրաժարական տուած համբաւեցաւ, երկու աւուր յետոյ ներ- քին յեղափոխութեան երեսէ ի թուրքաստան փախչիլը լուեցաւ։ Որն ելիցէ, սա ստոյգ է որ Անգլիոյ գործը յաջողած և Աֆղանական կալը վերջացած կըհամարի։ Բայց թէ ինչ պայման- ներով, դեռ յայտնի չէ։ Բերլինի ֆօթ. լրագիրը կըկարծէ թէ Անգլիոյ թէպէտեւ չկամիր բոլոր Աֆղանիստանի տիրել, սակայն միտք ունի սահ- մանաց կարևոր ուղղութիւն տալու, եթէ նորա մէջ պարունակելու լինի Գուէդգահէն գէտ ի խիպէի կիրճերը տարածուած երկիրը։

Բայց արդեօք այնպիսի պարագայի մէջ վը- տանդի չպիտի հասնի, Ռուսիոյ ուղղակի միջու- մտութեան չպիտի հանդիպի։ Ասոնք գեւաւնե- թաղատութիւններ են, որոնք ազան կամ ան- ազան, կամ ի ճշմարտութիւն կըփոխուին և կամ ստուգութիւնն ինչ որ է յերևան կ'ենեն։ Իսկ առ երեւոյթս Ռուսիոյ ցոյց տուած ընթաց- քը մեզ կարծել կուտայ որ, Անգլիոյ հետ գաղտնի քաղաքականութեան մի ծրագիր կըն- քած է և համամտութեամբ կ'ընթանան, ինչ- պէս եւրոպական թուրքիոյ հետ։

Անգլիոյ վեհ. Թագուհին խորհրդարանը բաց- ւելու առթիւ արտասանած դահախօսութեան մէջ ցաւ կըյայտնէ, պաշտօնէից խորհրդարանը անժամանակ բանալ տալուն պատճառաւ։

Աֆղանիստանի էմիրը, կ'ըսէ, մերժելով իմ բարեկամարար զրկած դեսպանութիւնս, հար- կադրեց զիս վճարար որ հատուցում խնդրե- լու համար պատերազմ բանամ։ Միւս ամեն տե- րութեանց կողմէ բարեկամական զգացմանց հաւատարմութիւնը կ'ընդունիմ, և կըյուսամ որ եւ- րոպիոյ խաղաղութիւնը Բերլինի դաշնագրոյն անխեղի գործադրութեամբը հաստատ կըմնայ։ Թագուհին կըխոստանայ որ մի քիչ ժամանակ խորհրդարանը հանդիստ առնելէն յետոյ՝ քանի մի առաջարկութիւններ ունի ընելիք հասարա- կաց բարեոյն համար, և կըլնդրէ որ այն խնդ- րաց կարևորութիւն տան։ Թագուհին սոյն ճառը բանադատողներ եղան անգամաց մէջ, մի քանի ինդրոց մասին լուրերն պահելուն հա- մար։ Պ. Կլաւսթին Յունաց խնդիրը զանց առ- նելուն վրայ դիտողութիւն կ'ընէ։

Բուսիոյ կայսրը, որ վերջին դաւադրութեանէն ի վեր գործէ քաշուեր և իւր թագաժառանգ- որդւոյն յանձնէր էր կառավարութեան ղեկը, անցեալ ամսոյն մէջ նորէն ձեռքն առաւ և սոյն առթիւ երեք օրինակ հրամանագրեր հրա- տարակաւ է, որոյ առաջինն ուղղեալ է առիւր որդին և կ'իմացընէ կառավարութիւնն իւր ձեռքն առնուլը, երկուսն ուղղեալ է նոյն առ- թիւ մին տէրութեան քարտուղարին և միւսն պաշտօնէից։

Անցեալ թուով յիշեցինք տէրութեան բարձ- րացոյն պաշտօնէից մէջ տեղի ունեցած փոփո- խութիւնը, այս անգամ վեհ. Սուլթանին առ նո- րենտիր Մեծ Եպարգոս բարձր խէրէտտին փա- շայի տուած վեզիրական հրովարտական թարգ- մանութիւնը կըգնեմք, որոյ մէջ կըտեսնուի Ն. Վեհափառութեան գալիքի փոյթն ու ջանասի- րութիւնը, որով կըբաշխուէր ու կըյորդորէ զՆ. Բարձրութիւնը գործադիր լինելոյ բարենորոգ- մանց ծրագրին, և շնորհել բոլոր օսմանեան երկրին խաղաղութեան ու բարօրութեան այն բարեքները, որոյ թերութեանէն ծագեցաւ վեր- ջին պատերազմը։

Յոյս ունիմք Ն. Վեհափառութեան գլխութե- նէն և հաստատամտութեան և բարձր Մեծ- Եպարգոս խէրէտտին փաշայի հեռատեսութե- նէն և արգարաթիւթեանէն, որ այս անգամ գտնէ գլխակցաբար պիտի աշխատի կայսերա- կան հրովարտական հրամանները բաւ առ բաւ գործադրելոյ, որոյ մէջ կըկայանայ տէրու- թեան հաստատութիւնը։ Որ և իցէ վարչու- թեան հիմն պէտք է լինի արգարութիւնը։

Ահաւասիկ հրովարտական թարգմանութիւնը։

«Իմ մեծաշուք վեզիրս խէրէտտին փաշայ»

«Մեր պաշտօնէութեան մէջ քանի մի փոփո- խութիւններ մոյցընելը հարկաւոր ճանցողեւելով մեծ վեզիրութեան պաշտօնը ձեր յաջորդու- թեան կըյանձնեմ, և Շէյխ իւլ խալաֆութեան գահուն կըկոչեմ ծերակուտի անգամ իւրեանի գատէ Ահմետ Էսաթ էֆէնտին։ պատերազմական կարևոր պաշտօնը կըյանձնեմ մեր պալատի մա- րաջախտ Օսման փաշային։ արտաքին գործոց պաշտօնը՝ կրետէի ընդհանուր կառավարիչ Ա- լէքսանդր փաշային։ ներքին գործոց պաշտօնը Պաղտատի ընդհ. կառավարիչ Գատրի փաշային։ արգարութեան պաշտօնը՝ Մեք կայսե- րապետ Սայիտ փաշային։ վաճառականութեան և երկրագործութեան պաշտօնը Սիւրիոյ ընդհ. կառավարիչ Ճէվտէթ փաշային, և հասարակա- յին շինուածոց պաշտօնը՝ արտաքին գործոց պաշտօնէութեան խորհրդական Սափա փաշային կըյանձնեմ։

«Բէռնի փաշան թնդանթարանի արտոնութենէն հրաժարուելով՝ նորա տեղ ուրիշ կարող անձ մի պիտի կարգուի, և մինչև Ալէքսանտրոս փաշայի և Գատրի փաշայի գալը, որոշեցի որ Սայլա փաշայ վարէ ներքին գործոց և Սալա փաշա արտաքին գործոց պաշտօնէութիւնը»:

«Մեր գլխաւոր փափաքն այն է որ Բ. Գուռը հոգ տանի գործադրել ինչ որ կարեւոր է, որ պէտքի վերջին պատերազմէ ծագած դժուարութիւնները դադրին և բոլոր երկիրը առանց ժամանակ անցնելու՝ օգուտ քաղէ խաղաղութեան բարեքններէն և վարչական բոլոր միջոցներէն, զորս պարագայք հարկադրած են ձեռք առնուլ»:

«Կայսերական ուրիշհրովարտակ մի ևս պիտի ղրկուի ձեզ քիչ աւելոր մէջ, մեր հրամանները պարունակող, ի մասին շուտով գործադրելոյ բարենորոգմանց առաջարկները, որոնք առայժմ Բ. Գուռը քննութեան ենթարկուած են: Մեք կըփափաքեմք որ այն նիւթիս վերայ դուք ևս Մեր պաշտօնէից հետ միաբան կարեւոր և ստիպողական միջոցները ձեռք առնուք»:

«Տէր տացէ մեզ յաջողութիւն»:

—Անդրասի կոմսը Պիւտեմի համար կարգեալ յանձնաժողովոյ մէկ նստին մէջ, իւր քաղաքականութեան ընթացից վերայ տուած բացատրութեան առթիւ ասած է.

«Տեսնելով մի քանի չափաւորութիւններ, զոր ընդունած է Բ. Գուռը, և որք համեմատ են Բերլինեան դաշնագրոյն, մտերս պիտի իրագործին նաև ի մասին Նովի Բաղարի: Գրաւումը պիտի վերջանայ, երբ Արեւելեան խնդրոց դժուարութիւնները դիւրանան» — Յետոյ յաւելցուցած է սա խօսքերն ալ, «Սան Ստեփանոյի դաշնագրոյն հեղինակներն (ռուսք) իրենք ալ գիտեն, որ Տաճկաստան չկրնար ուրիշ մէկ (տէրութիւն) իւրեան յաջորդ ունենալ: Եւրոպա կ'ուզէ որ այն պետութիւնը ինքիւնքը ապահովացնէ բարենորոգութեամբ: Օսմանցիք Պոսփորի պահպանները պէտք է որ լինին»:

ԱՂԳԱՅԻՆ

Արշալոյս Արարատեանը, որոյ ընթերցողք՝ հրապարտութեամբ կ'ըսեմք, մօտ ժամանակէ ի վեր բաղմամբ և եղած են, հակառակ բաժանորդաց սակաւութեանը՝ որ իրենց պատիւ չբերէր, աւելի մեծ հրապարտութեամբ կ'ըսեմք թէ՛ նա իւր բանագատներն ալ ունեցած է: Ասիկայ մեզ ոչ թէ ցաւ կամ զայրոյթ կը պատճառէ, այլ աւելի ուրախութիւն և քաջալերութիւն կուտայ, ըստ որում աւելի կարեւորութիւն տրուած կը համարուիմք պարունակեալ յօդուածոց: Բանագատութիւնը օգտակար է, եթէ լինի այն առանց կրից և առանց նախապաշարման: Այնպէս մէջ տանն ոք և ամեն իրք ունի իւր կուսակիցն, ունի և իւր հակառակորդը: Եւրոպական լրագիրները ընթերցողները լաւ գիտեն որ, ամենաստորին խմբակ (քուլայ) մի որ և է խնդրոյ համար հաւաքուած, մինչև տէրութեան բարձր խորհրդաշաններն ունին իրենց կուսակիցներն ու հակառակորդները: Ուրեմն զարմանալի չէ որ մեր ազգին մէջ ևս պարզ խմբագիր մի ևս իւր հրատարակած հարցերու մասին կուսակիցներէն զատ՝ ունենայ նաև մի քանի հակառակորդներ: Մեք աւելի ուրախ կըլինէինք եթէ մեր լրագրին բանագատները տանը մէկ քուլայ և միման մէջ չյայտնէին իւրեանց բանագատութեան ինչութիւնը, այլ ի հրապարակ եղնէին և գրչով մեզ դիմաւորէին: Տեսնեմք ուրեմն ինչ մասին է մեր բանագատներու կարծիքը լրագրիս պարունակութեանց վերայ:

Արշալոյսը, կ'ըսեն, միշտ կը քննադատէ ազգայնական մէջ յուղումը խնդիրները, և յոռետես է միշտ իրաց լուրերը: Եւ թէ մի Ժողովներու մէջ տրուած ազգին օգտակար որոշումներն զանց կ'առնու հրատարակել:

Ազգային խնդրոց և անոնց գաղտնեաց անտեղեակ անձ մի կրնայ իւր ճշմարտութիւն ընդունել սոյն թերի տեսութիւնը և թէ երևս լրագրիս խմբագրութեան մէջ աստեղութեան և հա-

կառակութեան ոգի նշմարէ: Բայց մեք չեմք յուսար որ և ոչ մէկ անձն գտնուի խարուող, բայց ի մի քանի ժողովական անձերէ և նոցա սակաւթիւ համախոհներէ:

Ազգ. ժողովները եթէ ունին ազգօգուտ արդիւնքներ, անտեսական լաւ գործեր, ունին նաև իրենց պաշտօնական տեսրակը, այն է Մամուլը, որ թէ և անժամանակ կ'հրատարակուի, այսու ամենայնիւ զանց չառնոյր երբէք ժողովոց և խորհրդոց անօրէնութիւնները արձանագրել իւր ամագրքոյն մէջ: Ազգային պատմութիւնը կ'ըսէ վաղարշակի համար, թէ երկու հոգի յատկացուցած էր իւրեանք քով իւր յուշարար: մին լաւ գործերը և միւսը վատ գործերը կը յիշեցնէր, որ բարեգործութեան մէջ քաջալերուի և անիրաւութենէ զգուշանայ: Մամուլն մեզնէ յառաջ կանխելով առաջնոյն պաշտօնն խլած առած է իւր վերայ, և մեզ մնացած է երկրորդինը: մեք չեմք նախանձիր Մամուլ պաշտօնին, գիտեմք որ նորա պաշտօնին մէջ կրնայ անձնական շահեր մտնել և հանրութեան շահոց քիստ հասցնել, որ մեր բնաւորութենէ հեռի է: Մարդիկ երբ ունին իւրեանց հակառակորդը, կը ջանան միշտ զոչ մնալ, և վատ խօսել տալու տեղի չտալ: Մարդոց ճշմարիտ բարեկամն իւր թշնամին է:

Ուրեմն մեր բանագատը թող ուրախ լինին, որ մեք հակառակորդ համարուած եմք և կը խմբեմք ազգային ժողովոց արարքը և տնօրէնութիւնը: Բայց այնպէս չէ, բանագատ եղողը առանց կրից և առանց նախապաշարման պէտք է կարգայ լրագիրը: ուշադրութեամբ խորհի, արամբանէ և այնպէս եղրակացնէ. մեք բոլորովն յոռետես չեմք, մեք կը ճանաչեմք անձի մի լաւ յատկութիւնը, ժողովի մի ազգօգուտ տնօրէնութիւնները և չեմք զանար զանոնք հրատարակելոյ, երհրաւրեմք զբանագատը մի անգամ աչքէ անցնէ մեր Արշալոյս 1095 թիւը որոյ մէջ պիտի տեսնէ մեր դովութիւնը զոր առած եմք տեղոյս Ս. Առաջնորդին Մէլքի վերայ կոչուած ամբարիշտ գրքակին գէմ յատենի ժողովրդեան տուած մի քարոզը, թէ պէտեւ նորա միմայն վարդապետութեան գէմ բաղխելով՝ առանց զբեռնելն կամ հեղինակին անունը յիշելոյ: Սոյն ատենախօսութիւնը մեր վերայ բաւական տպաւորութիւն ըրաւ այն ժամանակ, կ'երեւի թէ պարզմտութեամբ մտիկ ըրած էինք: Իսկ այլոց ձախողակի ազգեց նոյն քարոզը, իբրեւ թէ առ երկիւղի և առ ի ցոյց ստիպուած լինի նա մի քանի խօսք խօսելոյ: և համազեցին զմեզ քիչ ժամանակէ յետոյ, նորա հեղինակին սերտ բարեկամութիւն ունենալը Ս. Առաջնորդին հետ, ստեպ ստեպ նորա մօտ յաճութիւնը, ծովազերեաց զրօտալայր նորա հետ ման գալը: մինչև անգամ ըսող եղաւ մեզ թէ՛ Ս. Առաջնորդը հեղինակին գործակցած է յիշեալ աշխատասիրութեան մէջ, զոր մեք հաւատացինք և չեմք հաւատար, վստայոյ և ոչ իսկ կարեւորութիւն տալով՝ հրատարակելիք լրագրին մէջ: Միթէ ասոնք յոռետեսութիւններ են: Զգապէն կատարեալ իրողութիւններ են, զոր զանց առինք յիշել, լուրջ խոհմանութիւն համարելով:

Եթէ բանագատները լաւ մտածեն, քաղաքական և կրօնական ժողովներէ դուրս՝ սոյն ժողովներուն պատուոյն և վարկին վնաս բերող խրողութիւններն աւագ աչքը դիտեն և դիտածնին քնեն, մեք կ'ըսեմք թէ պիտի փութան անմիջապէս մեր քով գալ, ձեռուրնիս թոթուել և շնորհակալ լինել մեր լուրթներէն: Այսպիսի պարագայից մէջ, այն բանագատն աւելի կը դժուարի և զայրոյթ կը զգայ, որ ուղղակի կամ անուղղակի վնաս կ'ընշմարէ իւր անձնական շահուն և կամ անձնասիրութեանը:

Անցեալ օր բարեկամս Երիտասարդութիւնը:

Ինձ քաղաքիս Հայ երիտասարդաց ազգային զգացմունքէ բոլորովն զուրկ լինելուն վերայ մէջ մի խնդիր ազգային կ'ըսէր նա, զարկ կուտայ անոնց երիտասարդական երակին: Թմրած

է նա, և ուրիշ բան խորհիւր, բայց եթէ իւր առեւտրական նեղ շրջանին սրտած կենաց առօրեայ ապրուստն հոգալ: Բայց ի մի քանի հարուստներէ, որոնք կարծես բոլոր շուկայի մենավաճառութիւնը իրենց սեփականէ կ'ուզեն, և երթալով շահագրիտական շրջանակն կ'ընդարձակեն:

Առեւտրական շրջանէ դուրս մեր երիտասարդաց ամենօրեայ մտածմունքն է ծովափանեայ սրճարաններն յաճախել, և եթէ մի քանի պատանիներ իրարու հետ համաձայնին, փոխանակ ընթերցատուն դիմելոյ, շունչերնին մինչև Արտեմեայ բազանիւր կ'առնուն: հոն կը տեսնեն զիրենք օգեւորած, զգայուն երիտասարդ գաւաճած: Անկէ դուրս կը գտնեն զիրենք թմրած, անզգայացած: Ազգութիւնը կարծես թէ ոչինչ նշանակութիւն ունի անոնց առջև: Զմիւռնիս, այո, կը պարծի իւր ընթերցատնով, ուրտեղ ունի բաւականին զրեանք, զանազան լեզուէ լրագիրներ և ամսատետրեր, բայց շունչի դոնէ ընդունած լրագրաց թուոյն կիսուն չափ ընթերցողներ:

Հայոց ազգը ամեն ուրեք իւր կեդրոն միութեան ունի միայն զեկեղեցին և գաղութները: Սոյն երկու հաստատութիւնները պէտք է գրաւեն ամբողջ հասարակութեան ուշը: Ի դիպուածի եթէ յիշեալ հաստատութիւններն խափանուելոյ լինին, ոչ ոք բայց ի քահանայից և դատաւորաց կը տեսնեն անոյեան կանգնիլ, վէճ յարուցանել, որովհետեւ մին քահանայից և միւսը վարժապետաց շահատներն են: Իսկ հասարակութիւնը չեմ կարծեր որ շարժի երբէք և իւր իշխանութիւնն բանեցնէ: Նա պիտի ասէ թէ երևս. «մեք այդ տեղ դուրս չունիմք. այդ դուրս մեք յանձնած եմք երեսփոխանական ժողովոյն: և երեսփոխանական ժողովն ազգին կառավարութեան ղեկը յանձնած է քաղաքական և կրօնական ժողովոց, տնտեսական և դատատնական խորհրդոց: մեզ ոչ ևս գործ կը մնայ»:

Ինչքան ժողովուրդը չլիաւոր որ յիշեալ ժողովոց ընթացից վերայ հսկելոյ իրաւունքն իրեն: վերապահած է: Երեսփոխանական ժողովը ժողովրդին հաւաքական կամքը կրնե՞րայ պահէն, նորա գործադիրն է: Եթէ չեղի իւր պաշտօնին մէջ, կ'անիրաւի և իւր նշանակութիւնը կը կորուստնէ: Նոյնը խմբագրու է նաև միւս ժողովոց և խորհրդոց մասին: հետեւապէս ժողովուրդն իրաւունք պէտք է ունենայ զանոնք լուծել տալով՝ նոր բնորութեան ձեռնարկելոյ, ինչպէս կը տեսնեմք զայս խորհրդաբանաց մէջ:

Կրտսենեմք շատ անգամ այնպիսի դէպքեր, զոր կրօնական ժողովը իւր իրաւասութեամբ պէտք է տնօրինէ: և հաճախ գործը մէկ անձի մի միջոցաւ կը տնօրինուի հակառակ եկեղեցւոյ կանոնի և հակառակ Սահմանադրութեան: Թէ պէտեւ տնօրինողը գլխաւոր անձ մի լինի և նա խաղաղ հիսկ: Կը պատահին ընտանեկան և ամուսնական խնդիրներ, որոնք դատաստանական խորհրդոյ կը պատկանին, կամ թէ որ խնդիրը ծանր է, դատաստանական և կրօնական անգամներէ բաղկացեալ խառն ժողովոյ, և հաճախ կը տեսնեմք որ այս օրինակ փափուկ խնդիր մի լոկ մէկ անձ մի թէ և նախագահ եղած լինի, նորա առջև կը ներկայացուի, ուր հետեւապէս առանց լուծում մի գտնելոյ, խնդիրը վէճի կը փոխուի, և վէճը կուտայ, և կուտէ կը ծագի գայթակղութիւն պարզամիտ ժողովրդեան մէջ: Այո, ժողովուրդը կը պայթակղի, իւր խիղճը կը բողբէ, բայց խղճին բողբոյ ձայնը արձագանգ չտար ժողովոց և խորհրդոց մէջ: և լուրեան կը յայտնէ իւր անբաւականութիւնը, իւր առարտաքս ունեցած թմրութիւնը և անզգայութիւնը:

Գաղութին դալով՝ ժողովուրդը կ'իմանայ որ կրօնական ուսմունքն և քրիստոնէական վարդապետութիւնն իւր բուն նշանակութիւնը կորուսած է, Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւնը գերմանական մէթոդով կ'ուսուցուի: Աշակերտաց ծնողը կ'ուզեն բողբ բառեալ, բայց երբ կ'իմանան ի՞նչ կրօնական ժողովը իւր նախագահովը մէկտեղ անտարբեր է սոյն մասին, մանաւանդ թէ իւր լուրթեամբը

նորմալ մեթոդին պայտապան է, ձայններն իրենց լիակատարությամբ լսելի են, ինչպես լսելի են լինում խորհրդակցության մեջ: Մեք այդ ամենն արդիւնքի միջոցով լսելի են դարձնում, ալ մեք դրանք չենք լսում, կ'ըսեն իրենց լսելի չենք: Բարեկամս դեռ չարունակել կ'ուզէր իւր գաղափարները, երբ անդին իւր մէկ ընկերն գաղափարներ հետ քովէն մեկնեցաւ՝ խոստանալով մի քանի անգամ լրացնել իւր խորհրդները խորհրդակցության անդգայութեանը վերայ: Ես զարմացայ երկատարութիւն խելացի խօսքերուն, եռանդուն սրտին, բարեպաշտութեան և ազգայնականութեան վերայ, համակրեցայ իւր հետ, բայց ամառասցի որ չունէր իւրեան ուրիշ հետեւող մի քաղաքիս լուսաւորեալ կարծեալ երկատարութեան մէջ:

Ամենապատիւ Ս. Պատրիարքին շարաթ օր Բ. Պաշտօն Մեծ—Եպարզօս խայրեալին փաշայի շնորհաւորութեան երթալուն առթիւ, նորընտիր Եպարզօս հետեւեալ յայտարարութիւնն ըրեր է Նորին Սրբաշնորհութեան:

Ինչն յանձնուեցաւ առհասարակ ամենուն ալ արդարութիւն ընելու պաշտօնը: Ես այս մասին Սրբաշնորհութեան Ազգային Համաժողովին հրամանները պիտի գործադրեմ, որոյ փափաքն է որ իւր բոլոր հպատակներն ալ հաւատարմութիւն և սիրտ և սէր ալ կրնաք յայտարարել ձեր կրօնական իշխանութեանը տակ գտնուող ձեր Հայ ազգայիններուն թէ այս ընթացքով պիտի կառավարուին և ըստ ամենայնի արդարութիւնը պիտի գործադրուի: Պաշտօններու դաշտով, առանց խտրութեան՝ էն արժանաւորագուծից պիտի տրուի պաշտօններն: Այս երկիրն մեր առնուալ ալ հանուրց հայրենիքն ըլլալով՝ պարտականութիւնն ալ հանուրց կրկնաբար Մեք մեր մէկիւթը, դուք ալ ձեր եկեղեցին, առնուալ ալ կրօնական պարտքերն իր կրօնականութեանը ու կ'ազդի ենք, իսկ ամենքն ալ առանց լրացուածութեան՝ այս երկրին հաւատարմութիւնը, և Սուլթանին ալ հաւատարմութիւնը, Սոսկըրանց վրայ երբոր ընթանալու ըլլամ, այն ատեն մեր վեհ. Սուլթանին հրամաններն խտրաբար պէտք գործադրած պիտի ըլլամ: Վերադառնալով իրենց, թէ ես մինակ վեհ. Սուլթանին խմբին գործադրելի և իւր կարծեացը թարգմանեմ: Ս. Պատրիարքը շնորհակալութիւն յայտնելով մեկնեց է յուսարից:

Երբեք ազգային Պատրիարք ամեն. Տէր Եսայի սրբաշնորհ, Ս. Պատրիարք Հօր և Վարդապետան յամալ մը գրելով խիստ գառն և անտանելի կրկնապէս երբեք ազգային վանուց վիճակը, և կրօնականութիւնն այս վիճակը վերջին ծայր յուսահատութեան մասնած է թէ՛ զինքը և թէ՛ միաբանութիւնը. ուստի կրկնապէս որ վարդապետը երբեք ազգային վանուց ցաւալի կացութիւնը ազգ. երեսփոխանական ժողովոյ ուղարկութեանը ներկայացնելով դեղ և դարման խնդրէ, առանց որոյ վանական կործանումը մտաւորաւ է:

Պրնուդի վանահայր Նիկողոս Եպիսկոպոսը իր վրէժ ընկերներով, Ռատիկանութեան մահապարտից բանտէն առնուելով, ինչպէս ծանուցել էինք, այսօր Մեհաօրհմանի բանտին մէջ յատուկ սենեակ մը գրաւած են, և թողութեան ըլլալով իրենց այցելութիւններ ընդունելու, 2 օրէ ի վեր բազմաթիւ ազգայինք տեսակցութեան կ'երթան:

Երբեք ամեն թէ, կըսէ Հայրենիք, Նիկողոս Եպիսկոպոս Չէլթուրէն ի Մարաշ և Մարաշն ալ Հայկալ խայրառականութեամբ և նախապատիւ օրութեան է մերի ջորիի վրայ նստեցուցած մէկ պիկիով և մէկ անգրաւարտիքով. նոյնպէս 2 ընկերներուն ձեռքերն ալ հէլէթի զարնուած: Մարաշ և թէ Հայկալ ասոնք խոստիւ հարգանքներ և տեսակ տեսակ տանջանաց են: Երբեք ամեն թէ, կըսէ Հայրենիք, Նիկողոս Եպիսկոպոս Չէլթուրէն ի Մարաշ և Մարաշն ալ Հայկալ խայրառականութեամբ և նախապատիւ օրութեան է մերի ջորիի վրայ նստեցուցած մէկ պիկիով և մէկ անգրաւարտիքով. նոյնպէս 2 ընկերներուն ձեռքերն ալ հէլէթի զարնուած: Մարաշ և թէ Հայկալ ասոնք խոստիւ հարգանքներ և տեսակ տեսակ տանջանաց են:

Երբեք ամեն թէ, կըսէ Հայրենիք, Նիկողոս Եպիսկոպոս Չէլթուրէն ի Մարաշ և Մարաշն ալ Հայկալ խայրառականութեամբ և նախապատիւ օրութեան է մերի ջորիի վրայ նստեցուցած մէկ պիկիով և մէկ անգրաւարտիքով. նոյնպէս 2 ընկերներուն ձեռքերն ալ հէլէթի զարնուած: Մարաշ և թէ Հայկալ ասոնք խոստիւ հարգանքներ և տեսակ տեսակ տանջանաց են:

տակներն միմիայն Հայոց Պատրիարքին կուտան Հայ եկեղեցականներն դատելու և պատժելու իրաւունքը, և քաղաքային ատեաններն ու և է իրաւունքը և ձեռնհասութիւն չունին Հայ եկեղեցական մը ոչ դատելու և ոչ պատժելու:

Սոյն առաջարկութեան դեռ պատասխան մը չէ. տրուել, կարծեմք, խառն ժողովն իր նկատողութեանը առարկայ ըրած ըլլալով զայդ: Նմանապէս Ս. Պատրիարք Հօր թախանձանացը վրայ, մեծ տեղութեանց գետնանք, և մասնաւորապէս գերմանական գետնանք՝ միջնորդելով Բ. Դրան մօտ, դադարեցնել տուել են Ունիոյ մէջ օսմ: զինուորական իշխանութեանց կողմէն Չէլթուրէնց գեմ տեղի ունեցած խռատութիւններն ու բռնութիւնները:

Դեռ պատասխան այս ձեռնարկը կարծեմ թէ՛ Բ. Դրան առիթ և տեղի տուել է ինչ ինչ դիտողութիւններ ընելու առ անգղիական գետնան սրը լայնարտ:

Եղած խտրութիւններէն այսքանը միայն բաւական կը համարեմք յիշել թէ Չէլթուրէն Հայ կանայք և տղայք Մարաշ բերուած ատենին ճանքան չարչարուել են, և մէկընտէն յիշ կին մը չարաչար գանակոծուելուն վրայ վիժել և շատ չանցած ինքն ալ ընկեր մեռել է: Այս խեղճերուն Մարաշ բերուելուն պատճառն է եղել՝ որպէսզի բնառուող փախստական սպերներն լսեն իրենց ընտանեաց այս չարչարանքը, ու երեւան ելնեն:

Կըկարծեմք դիտալ թէ այս բռնութեանց ամենքն ալ դադարած են: ԼՐԱԳԻՐ

Մշակ մէջ հրատարակուած հետեւեալ յօդուածը մեր Ս. Առաջնորդին և կրօնական ժողովոյն խորին ուշադրութեանը կը յանձնեմք:

«Մեր գաղութներում այս բոլորն ամենակարեւոր և ամենագլխաւոր առարկանքը կրօնը և Հայոց Պատմութիւնն են. արանց ուսուցիչը պէտք է շատ ընթերցասիրած և նախապատրաստուած լինի, պէտք է Ս. Գրքի և մեր հին և նոր գաղութները հմուտ և վարժ լինի. պէտք է մի տեսակ ձգտում և ոգևորութիւն ևս ունենայ այս առարկաների ուսումը մարմնացնելու և ներան իբրեւ մի կրթողական ամենագլխաւոր դէպք դարձնելու: Բայց դժբանքից՝ անպատճառ հարկաւոր է ծխական գաղութներում խառնաճիւղ գաղութները կրօնի Հայոց (գրաւարտ) լեզուի և Հայոց Պատմութեան դասերը միեւնոյն վարժարանի յանձնել. . . մանաւանդ որ՝ ով որ Հայոց լեզու չաւ գիտէ, կրօն և Հայոց Պատմութիւն ևս գիտէ, որովհետեւ մեր մասնաւորութեան մեծ մասը գրեթէ ամբողջապէս կրօնական և պատմական է միայն:

« . . . Մի քանի ժամանակից հետեւ ամենք աշխատում են տարածել և արմատացնել այն միտքը, թէ մեր գաղութներում կրօնական ուսմանքների գաղափարութիւնը բացառապէս պէտք է եկեղեցական յանձնել. իմ կարծիքով սա մեր եկեղեցու և ժողովուրդի ոգուն հակառակ և սխալ գաղափար է: Հայր. Բրիտանիայի կաթոլիկ չէ. նա ցանկանում է որ երեխան իր նախնեաց հաւատը սովորէ, ով ուղղւած է թող սովորացնէ, նրա համար այդ միեւնոյն է, միայն թէ լաւ և ազգայնացնէ: . . . » Մշակ թղթակիցը, որում կը վերաբերի այն յօդուածը, օրինակ կը բերէ Ռուսները, որոց հոգեւոր գաղութներում յաճախ տեսած եմ, կ'ըսէ, որ քահանայն լատիններէն կամ մի այլ առարկայ է ուսուցանում, իսկ կրօնը մի աշխարհական:

Իսկ սոյն խնդրոյ վերայ մեր Ս. Առաջնորդին և կրօնական ժողովը խորին ուշադրութիւնն հրաւիրելուն պատճառն այն է, որ մեր գաղութները կրօնական ժողովը մի քանի անգամ բողոքաւորաւ կ'երթան Նորին Սրբաշնորհութեան կը յիշեցնէ, վերջին նուազ ճարահատեալ կ'ըսէ նա ժողովոյն. « կրօնական ուսումը կը բնական դասուն պարտքն է ուսուցանել, ով որ վստահ է իւր կրօնական հմտութեան, թող հրամայէ երթալ դաս տալ: » Սոյն գէպքը երեսփոխանական ժողովոյն մատուցուած Տեղեկագրին մէջ յիշատակուած չեմք տեսնել գաղափարը:

Յօդուածը կը վերջանայ սա հետեւեալ խիստ ճշմարիտ և նշանաւոր խօսքով, « Ուշադրութեանը արժանի է և այն, որ այսպիսի գաղափարների ջատագովները նոր և գիտական համարվածներն են, այն ինչ հինները նորանցից աւելի ազատամիտ և համբերող են. ասածս կարող եմ բազմաթիւ օրինակներով ապացուցանել: »

Յաւայի կէտն այն է՝ որ մեր ազգային երկուսեւ գաղութաց մէջ ոչ թէ եկեղեցական, այլ և ոչ իսկ աշխարհական դասախօսող կայ կրօնական ուսման, բայց ի Աւետարանի լիկ պատմութեան ըստ բողոքական դրութեան: Մեր ձայնը բարձրացնելու համար դեռ ժամանակն չէ հասած. դեռ է. Պօլսոյ կրօնական ժողովոյն վերայն մեր բարեկրօններն չեն սպառած, որ, ըստ դիտողութեան ուսման տարաբաղդօրէն կրօնական դպրոցները տկարացնելու աւելի նպաստաւոր կ'երևի. քան թէ զօրացնելոյ:

ՔԱՆԱՔԱՆ ԽՈՒՐԻՔ

Զմիւռնիւ, 9 Դեկտեմբեր

Մինչդեռ ասիէ յառաջ վիշտ կը յայտնէինք անձրեաց պակասութեան համար, հիմալ ալ թերեւս ստիպուելով գանգատներ ընել չափազանց անձրեաց համար. որ թէ և անցեալ ամսոյն վերջերք քիչ շատ գոհ ըրած էր երկրագործաց դասը, բայց ներկայ ամսոյս ձիւն եկած անձրեւը նոյնան աւուրցմէ մնացած ջրհեղեղ մի էր, որ իւր փնտնեցողութեամբ մէկտեղ մեծ բարիք մի ևս չբաւ. քաղաքիս փողոցներն աւելով մաքրելով, ծառայութիւն մի զօր տեղական ժողովին (պէլէտիէի) պարտքն էր կատարել:

Անձրեւն յորդութեան տեղի ունեցան փնտնեւ հետեւեալներն են. վերի թաղերէն յորդած ժամանակ շուկաներուն մէջն ինչոր դիմացը պատահեցաւ, կահկարասիք, ապրանք և այլն բոլորն ալ աւելց տարաւ, մանաւանդ Մեքիս գետոյն մերձակայ թաղերուն մէջ, ուր ջրերուն բարձրութիւնը մէկ մեքրի հասաւ. բարեբաղդաբար փնտք քիչ է: Նոյնպէս գաղութներուն և Պաշտօնապատ գիւղին մէջ աւելի է աւերմունքն ու փնտք մի քանի տնակներ ծառեր և բաւական տաւարներ զոհ գացած են ջրին բռնութեանը: Սոյն միջոցին ծովուն ջրերն ալ ծովափանց բարձրութեան հասան, եթէ օր մի ևս աւելի, կարելի է որ քաղաքն ևս ջուրը կոխեր:

—Քաղաքիս կառավարիչ վեհ. Համալի փաշան անցեալ ամսոյ 27ին Նիֆ տաղը բոլորած լեռնակողմը գնաց, անձամբ տեղաւորացնելոյ 400 դաղթական ընտանիքները, որոնց ըստ վերջին պրոշման կեդրոնական յանձնաժողովոյ դաղթականութեան որ ի Կ. Պօլսի, հաստատ ընակութիւն պիտի տրուին Անատոլիոյ մէջ:

Գաղթականաց վերջը դեռ Հասաւ, նոյն օրը անգղիական նաւ մի 500 դաղթական ևս բերաւ մայրաքաղաքէն, որոնք առ այժմ վարձեալ խաներու մէջ տեղաւորուեցան: Եթէ վշտայի կէտ մի կայ սոյն գաղթականաց դաւառիս մէջ փոխադրուելուն մասին, այն է՝ բաց ի Չէրքէզաց տուած փնտնեւ, ուսելեաց և ի մասնաւորի հացի թանկութիւն պատճառներն, Նորին Վսեմութիւնը զգալով զայս, փութաց, զէթ եկող տարուան դաղիք արմտեաց նեղութեան առաջն առնելոյ համար հարկաւոր հրամաններ զրկել դաւառիս ներքերը, որ տեղութեան համբարներուն մէջ որքան ցորեն ու գաւրի կայ, երկրագործաց տրուի համեմատաբար չափաւոր դնով, որովհետեւ դրութեւ բաւական արմտիք չմնալով քաղաքէն կ'առնուն կրտանին, մինչդեռ ուրիշ տարիներ քաղաքս կը բերէին ծախելոյ համար:

—Կ. Պօլսոյ թուրք լրագիր մի կը ծանուցանէ եղեր թէ՛ կայս. կառավարութիւնը մտադիր է դաւառիս ոստիկանութեան կազմութիւնը օտարազգի զինուորական պաշտօնէի մի յանձնել: Այսպիսի լուր մի ամիս մի յառաջ ևս զրուցուեցաւ, բայց վերջը չբանեցաւ. խօսքին ու գործոյն մէջ տարբերութիւնը խիստ մեծ է:

—Խօսեմիչէն կը ծանուցանեն թէ՛ Զմիւռնիոյ մեր Ս. Առաջնորդին փոխանորդ և եկեղեցւոյս լուսարար արժ. Մակար վարդապետ երկուսար:

թի օր Պայքանքներն էօտէմիշ երթալուն հինգ չարագործներ վրան յարձակելով կրկողպտեն և չարաչար կըպատասխանեն նորա ցոյց տուած ընդդիմութեանը : Էօտէմիշ հասնելուն Միւտիւրը կ'իմանայ և քանի մի զապտիէ հասնելով կը- յաջողին բռնել չարագործները : Սոյն դէպքիս վրայ մեր ցաւակցութիւնը կըյայտնեմք :

— Լոյտի ընկերութեան նախագահ շոգենաւը անցեալ շաբաթ երեկոյին Աղէքսանդրիոյ հա- մար ճամբայ ելնելով էսքի կէտիղըսուած տեղը աւազի մէջ իրեցաւ . հետեւեալ օրը նոյն ընկե- րութեան Օրէֆէ շոգենաւն հասնելով նորա օգնութեամբ ազատելով շարունակեց ճամբան :

— Իտալիոյ Հումպերդ վեհ. թագաւորին իւր կենաց դէմ եղած դաւաճանութենէ անջնաս ազատելուն բարեպատեհ առիթիւ , մեր ամեն. Ս. Պատրիարք Հայրը փութացեր է բոլորԱղգիս կողմէ ուրախակցութեան գիր մի ուղղել առ վսե. դեսպանն յիշեալ տէրութեան : Ուրախ եմք ի սրտէ որ նորին Սրբազան Հայրութիւնը առիթ չփախցնեն Հայոց ազգին անեցած ան- կեղծ զգացմանց թարգման հանգիստեալ օտար տէրութեանց մօտ և դեսպանական յարաբերու- թեանց ուժ տալ ամեն պատեհ առիթներու մէջ : Սոյն միջոցներով յոյս ունիմք որ Հայոց ազգը օր մի Աղգայնութեանց ցանկին մէջ իւր նշանակութիւնն պիտի ունենայ :

— Լաւֆլի մէջ կըկարգամք . Վէննայի Պարսկական դեսպան Ներիման խան անցեալ շաբաթ մայրաքաղաքէն անցնելով, ուրբաթ աւուր միջօրէի աղօթքէն յետոյ վեհ. Սուլթանին ներկայութեան ընդունուեր . և սիրալիր ընդունելութիւն մը վայելեր է :

— Նոյնին մէջ կըկարգամք դարձեալ, թէ մօ- տերս Սուլթան Մուրատայ կուսակցաց կողմէ յեղափոխական փորձեր տեղի ունենալով, կայս- նուազածուաց երաժշտապետ Նէճիպ փաշայ ևս նոյն կուսակցութեան վերաբերելով, ձերբակալ- ուեր է . սոյն կասկածանօք պաշտօնադուրկ ե- ղած է նաև Սուլթանին բժշկապետ իսքէնտէր փաշան . մինչև անգամ Սալֆէթ փաշայի պաշ- տօնանկութիւնը սոյն պատճառին կըկարծէ տըր- ուիլ : Դարձեալ գլխաւոր նախարարներէն՝ Բէ- ուֆ փաշայ , Տամատ Մահմուտ փաշայ , Ահմէտ Վէֆիք փաշայ , Էտէմ փաշայ , Մէհմէտ Բիւշտի փաշայ , և ՇէյխիսլաւաՄիլլա Հասան Էֆէնտի նոյն յանցանքով ամբաստանեալ լինելով իւրա- քանչիւրն մէկմէկ տեղ զրկուելու են մայրաքա- ղաքէն հեռացնելով : Այս լրոյց մինչև որ աստի- ճան հաւատալ պէտք է , դեռ չեմք գիտեր :

— Խորհրդէի խորհրդականի պաշտօնը առժա- մանակեայ կերպիւ վարելոյ համար վսեմաշուք Իլիաս Էֆէնտի Չայնանի յանձնուեր է . որ նոյն պաշտօնատան ելեմտից դիւանապետ է :

— Յովհաննէս Չամիչ փաշայ ելեմտից մասնա- ժողովոյն նախագահ անուանեցաւ (12 Դեկ.) :

— Լոնտոնայէն Դեկ. 9 (ն. 8.) քաշուած հեռա- գիրը Շուվալով կոմսին ներքին գործոյ պաշ- տօնեայ ընտրութիւնը կըձանուցանէ : Եւ Աֆ- դանի Էմիրի համար կ'ըսէ թէ իւր ընտանիքը ի Բալի զրկած է , ինքն ևս միւսք ունի մեկնելոյ :

— Անցեալ կիրակի առաւօտուն Կրետէի հե- ոադրական կայարանի տեսուչն և ուրիշ անդ- ղիացի գործակատար մի սպանուած գտնուեր են Հերակլեայ ճամբուն վերայ , որոց մարմինը անխղճօրէն յօշոտուած էին :

— Թուրք լրագիրք կըձանուցանեն թէ՛ պա- տերազմի պաշտօնէութիւնը կայսերապահ զօրաց հրամանատարութեան և արքունեաց մարաշախ- տի պաշտօնին հետ միանալով՝ կազմ օսման փաշ- յային յանձնուեցաւ :

— Դարձեալ կըձանուցանեն թէ՛ բարձր Մեծ եպարքոսը ազատ մնալոյ համար ձանձրացուցիչ մարդոցմէ ու պալատականներէ , որոչեց որ , ով որ գործոյ մի համար իրմէ ունկնդրութիւն կը- պահանջէ , մասնաւոր տնտրակի մի մէջ իրենց անունը և խնդրոյն ինչ լինելը կարճ խօսքով գրեն . որոնք կարդացուելով՝ իրենց լուր կը- տրուի օր մի , և կրնան այն ժամանակ ներկայա- նալ նորին Բարձրութեան :

— Հնչեալական խնդրոյն կարգադրութեան համար , ինչպէս յայտնի է , Մուխթար փաշայ

զրկուած է Բ. Դյան կողմէ յԱթէնս : Կ'ըսուի թէ յիշեալ փաշային յանձնուած է պաշտպա- նողական և յարձակողական նիղակակցութեան պայմանադրութիւն առաջարկել Յունաց և Թուրքիոյ կառավարութեանց մէջ :

Հինգ արհեստագէտ (էնժէնիէօր) հասած են ի Կիպրոս կառավարութեան կողմէ . ուր երկա- թուղիներ և Ֆամակուստայի մէջ նաւահանգիստ և նաւարան շինելու համար հարկաւոր եղած քննութեան պիտի պարապին :

— Բուլղարիոյ իշխանի ընտրութեան վերայ տարաձայնութիւններ չառկան , այսու ամենայ- նիւ դեռ ոչ ոք նշանակուած չէ . ոմանք արգի- կառավարիչ Տոնգու քովֆորսաքովի համար պի- տի որոշուի կ'ըսեն . ամուսյ Զէին ըստ եւրոպաց- ւոց ազգ. ժողով պիտի դուստրուի Դընովայի մէջ . ուր պիտի ընտրուի Բուլղարիոյ հանդերձ եալ վեհապետը :

— Պետարքիտ որ Բուլղարիոյ մասն էր , Բեր- լինի դաշնագրոյն համաձայն Թուրքաց անցնելով, նորա տեղ Տապրուէնա դաւաճը որոշուած էր փոխարինութեամբ Բուլղարիոյ տրուիլ : Աւագ ա- ժողովոյ սոյն որոշմանքն ևս ի դորձ դրուեցաւ անցեալ ամսոյն մէջ առանց խաղաղութիւնը վրդովելու , և մեծ համակրութեամբ և հան- դիսական ցոյցներով ընդունուելով Բուլղարական իշխանութեան տիրապետութիւնը :

— Բուլղարի վեհ. կայսեր ի Բերլին վերադառ- նալուն առիթիւ կայսերական հրովարտակ մի տրուեցաւ բոլոր պաշտօնէից ստորագրութեամբ, որով կ'արգելուի Բերլինի , Պոդստամի և Շար- լոտենբուրգի մէջ բնակելոյ բոլոր այն կասկա- ծաւոր մարդիկը , որոց կողմէ հասարակաց ա- պահովութիւնը խռովելու երկիւղ կայ :

— Կարինէն դուրս է առ Մախ թէ Մոսկո- վաց տէրութիւնը յիշեալ քաղաքին Հայոց գե- րեզմանատան մէջ կաթող մի տնկել տուած է հոն թաղուած 14000 () Ռուս զօրականաց յիշա- տակին : Սոյն առիթիւ մեծ հանդէս կատարուեր է ի ներկայութեան համագրային երեւելաց և երեկոյին Ռուսաց հիւպատոսը մեծ կոչունք տը- ւեր է ի բարեպատեհ առիթ տօնախմբութեան Միքայէլ Մեծ Կ. քսին :

— Ի Բթովիոյ նստակ ստացաք ի մեծապատիւ թղթակցէ մերմէ , որով խնդրէ ի մէջ հրատա- րակել զբանասիրական յօդուածն մակագրեալ «բացակայութիւն Առաջնորդին Զուգայոյ . ի Զուգայէ » զոր ներփակեալ ունէր ի նամակին իւրում . խոստանալով նմա հրատարակել ի հե- տագայ թիւս Արշալուսոյ , խնդրեմք ներողա- միտ լինել մեզ առայժմ :

— Գահիրէի մէջ մօտերս երեք տուն հետզհե- տէ փուլ եկած է զանազան փողոցներու մէջ , ա- ռաշնոյն տակ մնացեր են եօթն հօգի բնիկ տե- ղացի . երկրորդին՝ տանտէրը միայն գտնուելով մեռեր է , երրորդին մէջ բարեբաղդաբար ոչ ոք չէ գտնուեր :

— Աղէքսանդրիոյ մէջ նաև գողութիւնն պա- կաս չէ եղեր , բայց Թուրքիոյ մէջ պատահած գողութիւններէն սա տարբերութիւնն ունին որ , գողերը մեծ մասամբ կըբռնուին . ինչպէս անցեալները հինգ եւրոպացի գող խորհրդով կիզնէյ անուն վաճառականին միջնապատը ծա- կելոյ միջոցին Բաղէլիքիին պահականոցէն երկու եւրոպացի ոստիկան քանի մի բնիկ պահակնե- րու հետ վերայ հասնելով թէպէտ կըբռնեն և իրենց հիւպատոսարանի կըյանձնեն՝ բայց ոչ ա- ռանց կուռի , բնիկներէն մին ծուռկէն կըզար- նուի ատրճանակով , զոր հարկ կըլինի ոտքը կտ- րել : Աղէքսանդրիոյ մէջ , ինչպէս յայտնի է , ու- տիկանութեան գլուխ իտալացի մի է , և եւրո- պացի սպայներ ունի իւր վարչութեան ներքեւ :

— Ճիւտէէն կըգրեն թէ այս տարուան հա- ճինեւուն թիւը 9000ի կըհասնի , մինչդեռ անց- եալ տարի 19000 էին :

Դուրպանի տօնախմբութիւնը այս տարի Նոյ- 23ին պատահած է Արաֆադ լեռան վերայ , 24, 25—26 Մենայի մէջ և 27ին Մէքքէի մէջ . ևս Նոյեմբեր 30ին սկսած են հասնիլ ի ճիւտէ նաւ մանկելոյ համար :

— Լոնտոնայէն Դեկտ. 12 թուով կըհեռագրեն թէ Եդուարդ Պուրն Մետան անուն մէկը ներ-

կայացուեր է նոյն օրը Պոլս թաղի ատեանը , Ասոր համար կ'ըսուի թէ տէրութեան երկրորդ քարտուղար Պ. Ա. Լիտտէլին և Փարիզու անդ ղիական դեսպան լորտ Լիոնսին անստորագիր նամակներ ուղղած է , որոնց մէջ վեհ. Թագուհ. Լոյն կենաց դէմօպառնալիքներ կ'ընէ : Յիշեալ անձը 60 տարեկան կայ և թարգմանի պաշտօն կըվարէր , զոր շատոնց ի վեր կըփնտուէր կառա- վարութիւնը . սոյն պատճառաւ վաւերտարի պա- լատան պահպանաց թիւը աւելցուցած էին ժամանակէ մի ի վեր նախագահութեան համար :

— Պոմպայէն առ Մարիէ Աւիլլէրայը լրագիրը կըհեռագրեն , թէ Աֆրան սպայ մի ճէլալպա- տէն Անգղիական ռանակատեղն հասեր է հրա- լիւրելոյ համար անգղիացի զօրապետը դէպ ի Բարբուրի վերայ յաւաճանալոյ , որպէս զի նոյ կառավարութիւն մի հաստատէ անդ , ուրտե- ընդհանուր ապստամբութիւն ծագած էր ընդ դէմ իշխանութեան Շիր Ալիի :

— Անգղիոյ վսե. դեսպանը Ս. Պատրիարք Հօր հետ անսակցելոյ ժամանակ՝ փախաք յայտնե- լով տեսնելոյ անգամ մի զԱրթ. Տէր Միլեա . Հայրը , ամուսյ Գին յատուկ թարգմանի մի հե- ի Բերա անգղիական դեսպանատունը գացեր է Նորին վսեմութեան ներկայանալոյ :

— Լաւֆլի կ'ըսէ թէ վանայ կուսակալութեան խորհրդական Ալաթօն Միլլաիէ Էֆ. Մալլ Վիճա- կի գանձային մէկ քանի խնդրոց , արոց և Մալլ հարստահարութեանց խնդրոյն վերաբերեալ ինչ ինչ խնդրոց կարգադրութեան համար , յա- տուկ պաշտօնով Նոյ . ի ի Մուշ հասեր է :

— Առաքաղաքի շրջակայքը մի քանի վաճա- ռական ճամբորդ Հայեր Զերքէզ աւազակաց հանդիպելով՝ կռուի կըբռնուին , Հայերը եր- կու Զերքէզ կըպաշտանեն , որ սէյերու որդիք են և չեր և քանի մի ալ կըվիրաւորեն . իսկ իրենցմէ 3 հօգի կըվիրաւորին յորոց մին հետեւեալ օրը կըմեռնի : Ցաւալին ու զարմանալին այն է որ իշխանի կառավարիչը Զերքէզաց բողքոյն վե- րայ միւս երկու Հայերը դատի կըլինայէ . իրենց կենսքը և տպանքը պաշտպաններուն համար :

— Յընուկի Նիկողայոս Եպիսկոպոսն և իւր 2 ընկերքը զարս Ամեն. Ս. Հայրը խնդրած էր Բ. Դաւէն ի Պատրիարքարան փոխադրուելոյ հա- մար , տակաւին Մէհմէտիսանէի բանտը կըբոս- նուին . որոյ ամեն պիտոյքն և ուտիլիքը Պատ- րիարքարանէն կըտրուի եղեր , երկու հօգի ալ անոնց ծառայութեանը յատկացուելով :

— Կ'իմանամք թէ Բ. Դուռը մտադիր է Զեյ- թունցւոց ընդհանուր ներում չնորհել :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիւն. վերջին թիւէս յետոյ բաւական չա- փում ունեցաւ զինքուն մէջ , իրենց տեսակին համեմատ :

Հասարակը 130 զուրուշ չէքին .

Եւրլին 140 .

Հասարակ Եւրլին 132—135 .

Գարահիսար ընտիր 137 .

Պողատիւ 148 .

Պողատիւ Եւրլին 135—140 .

Քրքաղաւ լաւը 146 .

Մարթիա 140—146 .

Առաջին շաբաթուան մէջ եղած ծախսն է 51 կողով . իսկ այս շաբաթուան է 22 կողով . ընդ ա- մենը 103 կողով . պատրաստի եղած ապրանքն է 2572 կողով :

ԾԱՆՈԹՈՒԹ

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱԼՆ

Տղայոց վարժարանի համար մօտ տարիներու մեջ հեղինակուած դասագրքերուն ամենէն կանոնաւորն ու օգտակարն է : Տեսեալն տպարանէ ի յոյս ընծայ- ուած հեղինակութեամբ Մամուրեան Պ. Մարտիա- պատուելոյ , եւ հետեւողութեամբ անգղիայի Զեմպը- սի կրթական ընթացքը ըստած մեկ գործոյն :

Գրքն է մեկ ձրաքն :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԾԱՆՈՒՍՈՑ ԱՐԽԱՏԵԱՆ